

ԱԼՎԱՐԴ ՄԵՄԻՐՁՅԱՆ-ԲԵՔՄԵՁՅԱՆ

ԵՊՀ դոցենտ, բան. գիտ. թեկն.

albeqmez@hotmail.com

ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ՈՐՊԵՍ ՊՐՈՒԼԵՍ ԳՐԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. հետսովետական գրականություն, հայ գրականություն, վրաց գրականություն, ադրբեջանական գրականություն, հայրենիք, պետություն, ազգ, գրական զուգահեռներ:

Ключевые слова и выражения: постсоветская литература, армянская литература, грузинская литература, азербайджанская литература, родина, государство, нация, литературные параллели.

Key words and expressions: post-Soviet literature, Armenian literature, Georgian literature, Azerbaijani literature, homeland, state, nation, literary parallels.

20-րդ դարի 90-ական թթ.-ին անդրկովկասյան տարածաշրջանի երեք պետություններ՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, հայտնվեցին պատմաքաղաքական խոշոր և որոշ առումով նաև նույնական փոփոխությունների հորձանուտում: Նրանց մոտ անցյալը վերախմբավորվելու, ներկան հասկանալու և ապագան կանխատեսելու խնդիր է առաջանում, ինչը դրսևորվում է նաև գեղարվեստական ստեղծագործություններում: Դեռ ավելին, նկատի ունենալով երեք երկրների պատմականորեն անցած գրեթե նույնական ճանապարհը (նկատի ունենք մասնավորապես խորհրդային տարիները), հարևան ժողովուրդների գրականության մեջ ակնհայտորեն արտացոլվում է սեփական երկրի պատմական դիմագիծը, ինչպես, օրինակ, Օթար Ճիլաձեի «Քթոցը» վեպը, որում պատկերվող բազմաթիվ դեպքեր և իրադարձություններ զարմանալի հարազատություն են դրսևորում հայ իրականության հետ: Այս առումով հարկ է նաև անդրադառնալ միջգրական կապերի ամրապնդման փորձերին

հետխորհրդային շրջանում: Ուշագրավ է, որ վերջերս հաճախադեպ են հատկապես ժամանակակից վրաց գրողների երկերի թարգմանությունները, մասնավորապես Իրակլի Սամսոնաձեի «Ականջաբարձ», Դաթո Տուրաշվիլիի «Ջինսի սերունդը», Օթար Ճիլաձեի «Քթոցը», Գուրամ Օղիշարիայի «Պրեզիդենտի կատուն» ստեղծագործությունները, ինչպես նաև բազում պատմվածքներ և բանաստեղծություններ, որոնք լույս են տեսնում մամուլում: Ակնհայտ է նոր դրներ են բացվում հայ-վրացական գրական կապերի ընդլայնման համար: Նույնը, իհարկե, չենք կարող ասել ադրբեջանական գրականության մասին, քանի որ անկախության շրջանում, մեր տեղեկությամբ, հայերեն է թարգմանվել Աքրամ Այլիսլիի «Քարակերտ երազներ» վեպը, ինչպես նաև Սեյմուր Բայջանի «Գուգարք» վեպը, որը գրքային ձևաչափով հրատարակված չէ, այն հասանելի է համացանցում¹: Սակայն վերոնշյալ հեղինակների վեպերից հայ իրականության մեջ հատկապես մեծ արձագանք գտավ Այլիսլիի վեպը: Թերևս այն պատճառով, որ առաջին հայացքից ակնհայտ է հակաադրբեջանական և ընդգծված հայամետ գաղափարախոսությունը, քանի որ վեպը դատապարտում է Ադրբեջանում հայերի հանդեպ պարբերաբար իրականացվող դաժանություններն ու բռնությունները: Սակայն այլ է հեղինակի մեկնաբանությունն այս առիթով: Նա հարցազրույցներից մեկում նշում է, որ այս ստեղծագործությամբ ինքը փորձել է ուղերձ հղել հայ ժողովրդին՝ ասելով. «...մենք չենք մոռացել այն չարիքը, որ պատճառել ենք նրանց, այո, մենք կատարել ենք այդ չարիքը, բայց նույնը արել են նաև նրանք, և այդ ամենի, նաև Խոջալուի մասին պետք է պատմեն նաև հայ հեղինակները: Ես ուղերձ եմ հղել հայերին, որ ամեն ինչ դեռ կորած չէ, և մենք կարող ենք խաղաղ համագոյակցել»²: *

¹ <https://gugark.epress.am/?fbclid=IwAR0PoxQ-6TMm-8nIYpnjFonAMVbuPOxD25NKvZ-dESIUv030GID7BETmD5I>

² <http://theanalyticon.com/?p=2864&lang=ru>

* Հարկ է նաև նշել, որ հայ իրականության մեջ վեպը ունեցավ մի քանի թարգմանություն. Հ. Սողոմոնյանի և Լ. Գալստյանի «Քարակերտ երազներ» (Եր., Էդիթ պրինտ, 2013), Ա. Վարդանյանի, Ա. Անանյանի, Ս. Գեղամյանի «Քարե երազներ» (Եր., Գրաբեր, 2013) և Լ. Զիլֆուղարյանի «Քարե երազներ» (Եր., Նորք, 2013): Սույն հոդվածի համար հիմք է հանդիսացել Հ. Սողոմոնյանի և Լ. Գալստյանի թարգմանությունը: Ուշագրավ է նաև այս վեպի, որի ժանրային բնորոշումն է «վեպ-ռեպլիեն», «ռոդիսականը»: Այն գրվել է 2006-2007 թվականներին, սակայն հրատարակվել է 2012-ին «Дружба народов» ամսագրում ռուսերեն՝ հեղինակի թարգմանությամբ: Վեպի լույս տեսնելուց հետո ադրբեջանի ժողովրդական գրող, արվեստի վաստակավոր գործիչ, բարձրագույն «Իստիզլալ» և «Շոհրաթ»

Ինչպես նշվեց վերը, հետխորհրդային շրջանում ստեղծված ազգային գրականությունների զուգահեռ ընթերցման ընթացքում ակնհայտ է դառնում, որ գրեթե նույնատիպ պատմա-քաղաքական իրադարձությունների ոլորապտույտում գտնվող ժողովուրդների գրականությունները ուշագրավ ընդհանրություններ են հանդես բերում գեղարվեստական մտածողության տիրույթում: Նկատի ունենալով գրական տեքստերում առկա զուգահեռները՝ նպատակահարմար է այդ ընդհանրությունները ներկայացնել հատկապես երեք հեղինակների՝ Լևոն Խեչոյանի «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի» (1995), Օթար Ճիլաձեի «Քրոցը» (2003) և Աքրամ Այլիսլիի «Քարակերտ երազներ» (2012) վեպերի համեմատական քննությամբ: Այս վեպերում, մասնավորապես հայ և վրաց հեղինակների ստեղծագործություններում զուգահեռ ընթերցման պարագայում ակնհայտ են թեմատիկ, կերպարակերտման, պատկերային, լեզվաոճական շերտերի ընդհանրություններ: Բնականաբար, ազգային մտածողության հրամայականներից ելնելով, տարբեր են երեք գրվածքների գաղափարական հարցադրումները, առաջադրված խնդրի լուծման եղանակները և եզրահանգումները:

Իրենց երկերում հեղինակները բացառիկ ներսուզումներով, երբեմն մարգարեական պայծառատեսությամբ և մտահանգումներով փորձում են պատկերել Խորհրդային Միության փլուզման հետևանքով անկախություն ձեռքբերած և պետականությունը վերահաստատած իրենց հայրենիքների առջև ծառայած մարտահրավերները՝ անցյալի միջոցով գնահատելով ներկան՝ ապագայի ելքեր որոնելու ձգտումով: Բնական է, որ երկու մշակույթների (խորհրդային-ազգային) խզումը նախևառաջ անցյալի և ապագայի փոխհարաբերության հեռանկարների գնահատմանն է հանգեցնում, և հենց այս է պատճառը, որ երեք վեպերում էլ առանցքային

շքանշանների ասպետ Աքրամ Այլիսլիին Ադրբեջանում գրկում են պետական բոլոր պարգևներից և կոչումներից՝ ենթարկելով հալածանքների և սպառնալիքների: Այնուամենայնիվ, գրքի «կյանքը» շարունակվում է, և 2018 թվականի նոյեմբեր ամսին գիրքը լույս է տեսնում նաև անգլերեն, ինչի առիթով հեղինակի տված հարցազրույցներից մենք հասկանում ենք, որ անգլերեն թարգմանության, ապա ընթերցողական լայն շրջանակների հետաքրքրության հետ հեղինակը մեծ հույսեր է կապում, քանի որ. «Եթե գիրքը գտնում է հանդիսատեսին, գտնում է իր ընթերցողներին, ինչ-որ իմաստով տարբեր երկրներում ռեզոնանս է ունենալու և դա իմ ուժն է, անմահությունը:... Հասկանում եմ, որ ինձ ֆիզիկապես հիմա շատ հեշտ է ոչնչացնել, բայց բարոյապես նրանք անգոր են»:

<https://www.youtube.com/watch?v=maF3LixcTsk>:

նշանակություն է ձեռք բերում անդրադարձը պատմական անցյալին: Պատմությունը, սակայն, նրանցում ծավալային և գաղափարական տարաբնույթ նշանակություն է ձեռք բերում: Եթե Լևոն Խեչոյանի վեպում պատմական անցյալը դառնում է գեղարվեստական ժամանակի և տարածության հիմնական կրողը (դեպքերը ծավալվում են չորրորդ դարի Հայաստանում), ապա Ճիլաձեի վեպում գեղարվեստական ներկան պատկերում է վրաց-արխազական պատերազմի ժամանակաշրջանը (1992-1993), սակայն վեպի գաղափարական առանցքը հիմնվում է նախ՝ պատմական անցյալի՝ մասնավորապես Ալեքսանդր Առաջին Կախեթիի թագավորության ժամանակաշրջանի (1476-1511), ինչպես նաև Վրաստանի ռուսահպատակեցման և խորհրդայնացման պատմական ընթացքի գեղարվեստական պատկերման վրա: Այլիպիի վեպում բուն գործողությունները ծավալվում են 1989-1990-ական թվականներին: Վեպն ավարտվում է 1990թ.-ի հունվարի 13-ի՝ «արյունագույժ սև գիշերվա»՝ Բաքվում հայերի զանգվածային կոտորածներին անդրադարձով: Մակայն Այլիպիի վեպում նույնպես գեղարվեստական ժամանակը պարբերաբար վերադառնում է պատմական անցյալին՝ 1919 (Այլիսի հայկական ջարդերը), և 1952 (գլխավոր հերոսի՝ Այլիսում անցկացված մանկության տարիները) թվականներին: Հետևաբար, պատմության մեջ այսօրվա հարցերի պատասխանների որոնման միտումը կարևոր նշանակություն է ձեռք բերում երեք վեպերում էլ: Թեմատիկ առումով երեքում էլ ստեղծագործությունների կենտրոնական հյուսվածքի հիմքը դառնում է հայրենիքի թեման, սակայն գաղափարական առումով նրանցում այն ձեռք է բերում տարերանգ հարցադրումներ և լուծումներ. այսպես. Լևոն Խեչոյանի վեպում գլխավոր գաղափարական խնդիրը պետականության հարցն է, որի սիմվոլը դառնում է թագավորը՝ Արշակ արքան՝ **«Թագը՝ ժողովուրդ է, ժողովուրդը՝ հող, հողը՝ թագավոր: Իսկ լավ թագավորը՝ ժողովրդի արժանապատվություն»**³: Ինչպես իրավափոխընդհանուր է գրականագետ Գ. Հակոբյանը, պետականության պարագրկումը, անընդհատ պրկված, վիճահարության կեռմաններում, երկվության մեջ, սակայն բոլորի մոտ ամրագրված, անկախ ենթակայական դիտանկյունի, տրամագծային հակադրականության խնդիր է դառնում⁴: Ըստ քննադատի՝ պետականության խնդիրը առնչվում է բոլոր կերպարներին. «Վեպի բոլոր պերսոնաժներն են փորձում դա պարագրկել՝ որպես ինքնություն, իբրև

³ Լ. Խեչոյան, Արշակ արքա, Դրաստամատ ներքինի, Եր., 2002թ., էջ 228: Այսուհետ սույն աղբյուրից մեջբերումները կարվեն շարադրանքում, փակագծերի մեջ:

⁴ Այս մասին տե՛ս Գ. Հակոբյան, Հողվածներ, Եր., 2018թ., էջ 132:

գոյության «միաբնակություն» ընդհուպ Աստծո ու թագավորի հարաբերակցության մեջ առաջնայնության հարց»⁵: Օթար Ճիլաձեի վեպի գաղափարական հիմնական առանցքը հենց հայրենիքն է, հայրենիքի վերածննդի ու ազատագրման ուղիների որոնումը, հայրենիք, որի ներկան վեպում պատկերվում է որպես փոքրիկ, թշվառ, մեռած, մահվան դատապարտված, արդեն դիակի նեխահոտ արձակող. *«...ընկած հատակին, վիրավոր, հազարակերպ դավաճանված ու բոլորի կողմից հավասարապես գոհաբերված հայրենիքը»*⁶, *«...ձեր հանրաճանաչ «համայն Վրաստանն» ընդամենը պատմական միրած է... Սատկած էջի երագ»* (230): Այլիսլիի վեպում գաղափարական հարցադրման առումով առավելապես կարևորվում է *ազգային* նկարագրի հանդեպ հեղինակի անձնական տառապանքը: Մահմեդական բնակչության՝ ծայրահեղության հասնող դաժանության դրսևորումները հատկապես հայ բնակչության հանդեպ՝ մասնավորապես Այլիսի ջարդերը, ապա նաև 1990թ. Բաքվի ջարդերը վեպի ադրբեջանցի հերոսների մոտ առաջացնում են վերաբերմունքի կտրուկ փոփոխություն թե՛ կրոնի, թե՛ հայրենիքի հանդեպ. *«Ու թ է մեր մարդասեր ազգը, ու թ է մեր փառասպանծ մտավորականությունը»*⁷ - տագնապում է վեպի հերոսը՝ Սադայր:

Ուշագրավ է հետևել երեք երկերում հղացքների իրացման ընթացքին:

Լ. Խեչոյանի վեպը բազմաշերտ, մազմիմաստ գեղարվեստական հյուսվածք է, անհնար է միանշանակ շեշտադրել վեպի գլխավոր հղացքը, սակայն մեր ուսումնասիրության համատեքստում մենք հատկապես ուշադրությունը կկենտրոնացնենք վեպի հետևյալ հարցադրման վրա. վեպը փորձում է հասկանալ դարերի ընթացքում հայ ժողովրդի պատմական ընթացքի մեջ պետականությունը պարբերաբար կորցնելու դրդապատճառները: Այդ նպատակով վիպական հղացքի իրագործման նյութ են դառնում 4-րդ դարի հայ ժողովրդի պատմության փաստերը: Ժանրային առումով վեպը պատմավեպ է, սակայն մի կողմից այն դուրս է դասական պատմավեպ լինելու չափորոշիչներից, և այդ իսկ պատճառով քննադատն այն համարում է «Պատմավեպի «ոչնչացում» գրականություն

⁵ Նույն տեղում:

⁶ Օ. Ճիլաձե, Քթոցը, Եր. 2015թ., էջ 209: Այսուհետ սույն աղբյուրից մեջբերումները կարվեն շարադրանքում փակագծերի մեջ:

⁷ Ա. Այլիսլի, Քարակերտ երագներ., Եր. 2013թ., էջ 120: Այսուհետ սույն աղբյուրից մեջբերումները կարվեն շարադրանքում, փակագծերի մեջ:

ապրեցնելու համար»⁸, իսկ մյուս կողմից էլ ստեղծագործությունը միաժամանակ ժամանակակից վեպ է՝ «...գեղարվեստական հյուսվածքով, որպես ժանրային կառույց»⁹, ինչպես նաև այն «...պատմական դիպաշարի հարաբերումն է մեր ժամանակի պատմությանը»¹⁰: Պատմական փաստերի գեղարվեստական մեկնությունների միջոցով հեղինակը, ըստ էության, փորձում է գտնել նորանկախ հայ պետականության առջև ծառայած խնդիրների պատասխանները: Ընդհանրապես չորրորդ դարը հայ ժողովրդի պատմության մեջ հիշատակվում է որպես հակասական, բարդ, խրթին և ողբերգականության ու հայրենասիրության շեշտադրումներով հագեցած մի ժամանակաշրջան: Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանն է այն՝ հարուստ պետականամետ և հակապետական խմորումներով, սպանություններով և դավաճանություններով: Արշակը հայ ժողովրդի պատմության մեջ ամենահակասական գնահատականների արժանացած թագավորներից մեկն է, որի գահակալության ժամանակաշրջանը տարբեր ժամանակներում դարձել է գեղարվեստական մտահղացումների իրագործման դաշտ¹¹:

Լևոն Խեչոյանի ստեղծագործության մեջ Արշակը պատկերվում է որպես խիստ բարդ, հակասական մի անձնավորություն՝ օժտված մարդկային թուլություններով, ինչպես նաև գերբնական զորությամբ և ուժով: Արշակը մի արքա է, որի պատմական առաքելությունն է պահպանել և ամրապնդել հայոց վերահաստատված պետականությունը: Անցնելով բազում դավադրությունների, սպանությունների, վտանգների, պատերազմների, խռովությունների միջով՝ Արշակին ի վերջո չի հաջողվում իրականացնել պետականամետ իր ծրագրերն ու մտահղացումները, քանի որ երկիրը հայտնվել է պարսկա-բյուզանդական բախումների թատերաբեմում, և Հայաստանը սկսում է թուլանալ, պառակտվել, բզկտվել. պարբերաբար գերվում և ստրկացվում են հայոց թագավորներն ու թագավորական տները, երկիրը պառակտվում է ներսից բյուզանդամետ և պարսկամետ իշխանների անմիաբանության պատճառով, ընդ որում, իշխանական տները պատերազմում են թե՛ իրար դեմ, թե՛ թագավորի: Երկիրը ներսից քայքայվում է նաև հին ու նոր հավատքների՝ հեթանոսության և քրիստոնեության ջլատիչ պայքարի մեջ, թագավորի և

⁸ Գ. Հակոբյան, նշված աշխ., էջ 128:

⁹ Ս. Գրիգորյան, Բանասիրություն և բանավեճ, Եր., 2002թ., էջ 181:

¹⁰ Ս. Գրիգորյան, նշված աշխ., էջ 173:

¹¹ Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Բարդակչյան, Պատմաբանասիրական հոդվածներ., Եր., 2018թ., էջ 7-31:

հոգևոր առաջնորդ Ներսեսի տարածայնությունների պատճառով, ինչպես նաև անկասելի քաղաքական դավերի և սպանությունների հետևանքով: Ինչ էլ որ փորձում է անել Արշակը երկրի հարստացման (պետական գանձարանի հայտնաբերման փորձերը), մշակութային անկախացման (հայկական գրերի որոնման փորձերը), պետականամետ կառույցների ստեղծման (Արշակավանի կառուցումը), թագավորական տան միավորման, իշխանների հաշտեցման, արտաքին թշնամու դեմ պայքարելու համար, նրա բոլոր նախաձեռնություններն ու ջանքերը պսակվում են անհաջողությամբ: Գնալով Արշակի ժամանակի դեպքերի և իրադարձությունների հետքերով՝ Խեչոյանը հանգում է նաև 20-րդ դարում պետության և պետականության կայացման համար անհրաժեշտ նախապայմանների՝

զենք, ոսկի և միաբանություն. *«Ճանապարհը զենքն է ու ոսկին, ելքը միաբանությունը»* (140),

նախորդ թագավորների փորձ. *«Արշակ արքա, երբեք որևէ պետություն, առանց իր թագավորների փորձը հաշվի առնելու, ոչ հզորանում է, ոչ էլ միաբանվում»* (140),

քաղաքական գործընթացների չընդհատվածություն. *«...քաղաքականության մեջ ոչ ժամանակ կա, ոչ էլ դադար»* (140),

ինչպես նաև միշտ մի նոր, դեռևս չփորձված ուղիների որոնում. *«Իմ թագավորության ժամանակ փորձվեցին այդ միջոցները, դու նոր ուղի գտիր»*, -ասում է Տիրան թագավորահայրը Արշակին(140):

Պատմական անցյալի և ներկայի զուգադրմամբ Խեչոյանը նույնատիպ խնդիրներ է տեսնում երկու ժամանակաշրջաններում, սակայն գրողական եզրահանգումը թերևս մտահոգիչ է. Արշակին չի հաջողվում փրկել իր թագը, այն է՝ պետականությունը, քանի որ, ինչպես նշվում է վեպի բնաբանում ընտրված Առակաց գրքի գաղտնագիր-ուղերձում. «Երեքն են, որ գեղեցիկ են գնում, և չորսն են, որ գեղեցիկ ընթացք ունին¹². Առյուծը, որ զագաններից զօրավորն է, և ոչ մի բանի երեսից ետ չի դառնալ: Եղնիկը, և նոխազը, և թագավորը, որի զորքը իր հետ է»: Արշակի ձախողման պատճառներից է նախ այն, որ ընթացքը գեղեցիկ չէր. «Ազգ կա, որ իր աչքին մաքուր է երևում, բայց իր աղբիքը չէ մաքրված (Առակաց, Լ 12). և ահա վեպի

¹² Այս առումով ուշագրավ է Գրիգոր Հակոբյանի մեկնությունը. «Լևոնն այս վեպի համար իբրև բնաբան կիրարկել է Ագուրի այն խոստովանությունը, որտեղ կենտրոնանում է գեղեցիկ գնալու և գեղեցիկ ընթացքի էությունը (Առակաց, Լ 29, 30), թե ինչպես է գոյավորվում այդ ճանապարհը: Ընթացքը մանրամասնվում է ստեղծագործության մեջ իբրև պատմություն, ճակատագիր ու ինքնություն»:(Գ. Հակոբյան, նշված աշխ., էջ 129):

կառույցում նյութականանում է գեղեցիկ ընթացքի տարանջատումը սեփական կեղտից, ու հենց դա է հայկական պատմավիպասանության «ոչնչացումը», որը ստեղծագործությունն անպայմանորեն դարձնում է նշանակալի այսօրվա գրական պրոցեսում»¹³: Ապա՝ Արշակը, իհարկե, զորավոր էր, սակայն ժամանակ առ ժամանակ իր ընթացքից ընկրկում էր, քանի որ անհասկանալի և անորսալի սովեր կար նրա դեմքին, մի նշան՝ «դուրս չեկողը, չվերջացողը»(222), «անորոշությունը, կարմրով ներծծվածը, ներկայի մոռացությունը և առանձնահատուկը»(223), ինչի արդյունքում թվում էր, որ նա «երկրի վրա թագավորություն անելով, ոչ թե ինչ որ բան էր հաստատում, այլ ինչ որ հաստատ բանից փախչում էր» (222), ինչի պատճառով թագավորի մեջ ծնվում էր առանձնահատուկը, եզակին, դժբախտությունը, կարմրով ներծծվածը և դաժանը, որը հնարավոր չէ որսալ: Եվ, վերջապես, Արշակը անհաջողության է մատնվում, քանի որ նա թագավոր էր, որի զորքն իր հետ չէր:

Ի տարբերություն Խեչոյանի երկի, որում հիմնական հարցադրումը պետականության խնդիրն է, Օթար Ճիլաձեի «Քթոցը» վեպը հայրենիքի մասին է: Վեպի հղացքը, կերպարակերտումը, պատկերաստեղծումը, լեզուն ամբողջովին ծառայում են մեկ հիմնական նպատակի՝ վերլուծել և հասկանալ վրաց ժողովրդի պատմական ձախողումների ու անփառունակ ներկայի դրդապատճառները և դրանցից ձերբազատման հնարավոր ուղիներ որոնել: Պատումի կենտրոնում դրված է Կաշեղիների գերդաստանի չորս սերունդների պատմությունը, որի ընթացքում տեղի է ունենում Վրաստանի քայքայումը, բարոյալքումն ու ապականումը: Երկրի ճակատագրում անկումների, պարտությունների, նահանջների, հասարակական այլասերման սկիզբը հեղինակը նախ և առաջ տեսնում է պատմական անցյալի՝ 16-րդ դարի իրադարձությունների մեջ, երբ վրաց թագավորությունը կորցնում է պատմականորեն իրեն ընձեռված մի բացառիկ հնարավորություն. Հռոմի Պիոս Երկրորդ պապը, որոշելով Բյուզանդիայից տեղահանել օսմանցիներին, արևելքի քրիստոնյա պետությունների մեջ դաշնակից որոնելով, ամենահուսալիին տեսնելով Վրաստանը, Լյուդովիկոս Բոլոնիացի դեսպանին ուղարկում է Վրաստան, որն էլ չի գտնում Վրաստանը. «համենայնդեպս չգտավ այն Վրաստանը, որ հռչակված էր իր մեծահոգությամբ, բարեհոգությամբ, բարեգործությամբ ու ռազմական ոգով» (3-4), քանի որ. «Հպարտ, հարուստ աշխարհագրով Վրաստանը վերջնականապես փլուզվել էր մոնղոլների 200-ամյա տիրապետությունից, թեև Ալեքսանդր Առաջինը փորձ էր արել

¹³ Գ. Հակոբյան, նշված աշխ., էջ 129:

վերադարձնել նախնյաց փառքն ու ազդեցությունը ու այդ ընթացքում վրնդել էր լեշի հոտին վրա ընկած հարևաններին, սահմաններին նույնպես վերակառուցել էր պահակակետերով բերդ-ամրոցները, բայց այնուամենայնիվ ոչինչ չէր կարողացել անել ստրկությունից փչացած ու երես առած, հղփացած իր հարազատների՝ կնոջ ու երեխաների, եղբայրների ու նրանց զավակների հետ: ...Դե նա էլ վեր կացավ ու վանական դարձավ...» (4): Եվ կորցնելով Եվրոպայի հետ դաշնակցելու պատմական բացառիկ հնարավորությունը՝ Վրաստանը շարունակում և խորացնում է անկումը, ինչը, ըստ հեղինակի, զագաթնակետին է հասնում, երբ վերջնականապես հայտնվում է Ռուսաստանի տարաբնույթ իշխանությունների հպատակության ներքո, և այդ մասին ասվում է այսպես. «...ռուս Ալեքսանդր Առաջինն իր կայսրության որովայնում մեկդի չբերեց վրացի Ալեքսանդր Առաջինի կողմից փլուզված ու ավերակված երկիրը, որպեսզի իր կայսրության հետանցքից միայն երևան գար Վրաստան երկիրը, քանի անգամ էլ դա անհրաժեշտ լիներ, սակայն բնականաբար, դա արդեն կլիներ այլ Վրաստան» (6): «Ռուսական կայսրության հետանցքից» Վրաստանի նոր տեսակը պիտի ծնվեր՝ «մարդասպան հորից և անառակ մորից»: Նոր տեսակը Կաշեյիների սերունդը՝ անհայտ ժառանգականությամբ, քրոցում ծնված և մեծացած մի սերունդ, որը այսուհետ պետք է փոխանցեր իր իշխանությունը հաջորդների մեջ տեսակի գարշելի հատկանիշների էլ ավելի կատարելագործված որակները տեսնելու նախապայմանով. «Լինել ավելի վատը, քան ծնողը, ու երբ ժամը գար, ավելի լավը, քան որդին: Ահա և սովետական ամբողջ գաղափարախոսության կոմպոտը» (209): Ճիլաձեական կենսակերտման համակարգում Կաշեյին, կաշեյիությունը աստիճանաբար ձեռք է բերում մետաֆորիկ արժեք: Կաշեյին ազգանունն է, որը նախ ներկայացնում է տոհմը, ապա՝ ռուսական աշխարհակալական համակարգը, ապա դառնում միջ: «Կաշեյիները,- գրում է հեղինակը,- ոչ թե անձնավորություն են, այլ համակարգ, եթե կուզեք հեքիաթային վիշապի գլուխ, ինչքան էլ գլուխը կտրես, նոր գլուխ կաճի, ճիշտ նույնպիսի, ու դեռ ավելին՝ նոր» (243), սա այն տեսակն է. «...որ հենց ինքը պետք է ուտեր սեփական գլուխը, այլապես բնության մեջ չէր գտնվի մեկ այլ ուժ, որը կարողանար նրան կոտրել» (16): Ճիլաձեի վեպում Կաշեյիների տոհմը մարմնավորում է ժամանակակից Վրաստանը, հոր և որդու կոնֆլիկտը խորհրդանշում է հին և նոր Վրաստանների բախումը՝ հոր մահը հին Վրաստանի այլաբանական մահն է, որդու մահը՝ նոր Վրաստանի վերածննդի միակ հնարավորությունը: Վեպում հեղինակը հետևողականորեն զարգացնում է այն միտքը, որ Վրաստանի անկումը սկսվում է այն պահից, երբ այն կորցնում է կապը Եվրոպայի հետ: Եվ հայրենիքի քայքայման ընթացքը խորանում է

ռուսական տիրապետության հետևանքով: Վեպում հեղինակն անթաքույց համակրանքով Եվրոպայի հանդեպ, քաղաքական ենթատեքստով անընդհատ փորձում է ուղղորդել երկիրը դեպի Եվրոպա: Այս մտորումների արդյունքում հեղինակը մարգարեական պայծառատեսությամբ կանխատեսում և կանխորոշում է հայրենիքի ապագա ճակատագիրը: Քանի որ երբ այս վեպը գրվում էր, Վրաստանը դեռևս ձեռքագատված չէր ռուսական ազդեցություններից, ընդհուպ 2008 թվականի հայտնի «օգոստոսյան պատերազմը»:

Եթե Խեչոյանի վեպի գաղափարական հղացքը կենտրոնանում է պետականության, ճիլաձեռի պարագայում հայրենիքի խնդիրների վրա, ապա Աքրամ Այլիալիի վեպում ստեղծագործ միտքը սևեռվում է *ազգային* նկարագրի վրա: Վիպակի հղացքը ձևավորվում է Բաքվում հայերի հանդեպ մուսուլման ադրբեջանցիների դաժանությունների ֆոնին, և հերթական բախման ժամանակ ազգակից «երազները» (այդպես էին անվանում Հայաստանից վտարված ադրբեջանցիներին) դաժանաբար ծեծում են ադրբեջանցի մեծանուն դերասան Սադայ Սադրդիլին: Վեպը կառուցվում է հիվանդանոցում անգիտակից պառկած Սադրդիլի երազների, մոձավանջների և ենթագիտակցական հիշողությունների վրա: Վիպական քրոնոտոպի մի շերտը կազմում են Սադայի հարազատ գյուղի՝ Այլիսի (Ագուլիս) մանկական լուսավոր հիշողությունները, մյուս շերտը՝ Ագուլիսի՝ 1919 թվականին տեղի ունեցած հայերի ջարդերը և ջարդերից հետո գյուղում մնացած հայերի եւ ադրբեջանցիների համատեղ կյանքը, և այն, որ այդ արյունալի դեպքերից հետո ադրբեջանցի բնակչությունը դատապարտված է հիվանդությունների, աղետների, քանի որ. «Նրանց ոգիները, ում մենք տանջել ենք, մեզ հանգիստ ապրել չեն տալիս»-ասվում է վեպում (65): Վեպի մյուս շերտն էլ բժիշկ Ֆարգանիի կյանքի պատմությունն է, որը նույնպես հուսահատ և թևաթափ է իր ազգակիցների պահվածքից. «...երեք տարվա ընթացքում Բաքվում տեսածը կտրուկ փոխեց նրա վերաբերմունքը և՛ կրոնի, և՛ հայրենիքի, և՛ մարգարեի նկատմամբ: Բժիշկն առանձնապես ցնցված էր հայերի հանդեպ Բաքվի մահմեդական բնակչության դաժանությունից, հավանաբար այն պատճառով, որ հայերի կողմից մահմեդականների հանդեպ նման դաժանություն ինքը երբեք չէր տեսել» (37): Վեպի շերտերից մեկն էլ անդրադարձ է Ադրբեջանի քաղաքական կյանքին: Ըստ այդմ, Այլիալին ստեղծել է Խորհրդային Ադրբեջանի առաջնորդի՝ Խազեիների մոռյալ-գրոտեսկային կերպարը. «Ի դեմս նրա, կասկածից դուրս է, Իլիամ Ալիևը եւ իշխող վարչախումբը ճանաչել են «համազգային առաջնորդ» Շեյդար Ալիևին: Այդ դեռ բավական չէ, հերոսի շուրթերով Այլիալին, նկատի ունենալով արդեն թոշակառու, ամառանոցում «միայնակ ապրող» նախկին Խազեիներին, հարցնում է. «Ի՞նչ ես կարծում, նա

Մումգայիթը կազմակերպել է, որպեսզի Մոսկվայից վրեժխնդի՞ր լինի»¹⁴: Հարկ է նշել, որ երբ Այլիալին տեղեկանում է, որ իր վեպը պատրաստվում են թարգմանել հայերեն, մտահոգվում է՝ ասելով, որ հայերն այն կքաղաքականացնեն: Իհարկե, այս ստեղծագործությունը ոչ այնքան հայերի հանդեպ ադրբեջանցիների կատարած բռնությունների մասին է, որքան այդ բռնությունների հետևանքով ադրբեջանցիների քաղաքակիրթ ազգ կոչվելու անհնարիություն: Նաև, ինչպես բազմիցս հենց հեղինակն է նշել իր հարցազրույցներում, վեպը այն մասին է, որ հարևան ժողովուրդները պետք է խաղաղ ապրեն. «Ես գրկվել եմ հանգստից ու բարօրությունից հանուն երկու ազգակից ժողովուրդներին միմյանց մերձեցնելու փոքր քայլի, որոնք միմյանց կապված են ոչ միայն աշխարհագրական հարևանությամբ, այլև պատմական բազմադարյա ճակատագրով: Եվ ես չունեմ ավելի ցանկալի երազանք, քան նրանց վերստին միասին տեսնելն է: Եվ ես շատ եմ ցանկանում ապրել մինչև այդ լուսավոր օրը»¹⁵:

Զարմնալիորեն ընդհանրական են նաև վեպերի հանգուցալուծումները: Երեքն էլ ավարտվում են գլխավոր կերպարների՝ Արշակի, Անտոնի և Սադայի մահով, իսկ ավելի ճիշտ ինքնասպանությամբ: Սակայն կերպարների մահը տարաբնույթ եզրակացությունների է հանգեցնում: Ըստ այդմ, Արշակի մահով (Արշակին Անհուշ բերդում դաշունահարում է Դրաստամատը, սակայն այս կերպարը դիտվում է որպես Արշակի ներքին, անտեսանելի ես-ը, ներքին մարդը, և թագավորին խոցելուց հետո Դրաստամատը նույն դաշույնով սպանում է ինքն իրեն, ինչը մենք դիտարկում ենք որպես ինքնասպանություն) Լևոն Խեչոյանը կարծես գալիս է այն եզրահանգման, որ պետականություն ունենալու հայ ժողովրդի դարավոր երազանքը ողբերգականորեն դատապարտված է ձախողման: Սակայն ազգի լինելիության շարունակական ընթացքի անսպառ որոնումը հեղինակը փնտրելու է միֆի և առասպելի մեջ: Եվ այդ փնտրտուքը հանգեցնելու է իր հաջորդ և ցավալիորեն վերջին վեպին՝ «Միերի դռան գիրքը» վերնագրով: Ճիլաձեի հերոսի՝ Կաշեյիների գերդաստանի վերջին շառավղի՝ Անտոնի մահը (նա սպանվում է պատերազմի դաշտում, սակայն ինքնակամ նետվում է կրակի բերանը, ինչը մենք նույնպես դիտարկում ենք որպես ինքնասպանություն) հայրենիքի վերածննդի գրավականն է դառնում: Այդ մահը սիմվոլիկ նշանակություն է ձեռք բերում վեպում, քանի որ դրանով ավարտվում է Վրաստանի ռուսահպատակ անփառունակ պատմությունը և կանխորոշում է նոր Վրաստանի՝ Եվրոպամետ

¹⁴ ԱԶԳ օրաթերթ #10, 02-02-2013

¹⁵ Ժամանակ օրաթերթ, #60, 02-04- 2016

Վրաստանի ծնունդը: Քաղաքական այս ուղերձը վեպում գեղարվեստական մարմնացում է ստանում հետևյալ դրվագում. հոգեբուժարանում գտնվող Լիզիկոյին որպես տեսիլք հայտնվում է Լյուդովիկոս Բոլոնիացին, և ասվում է. «առարկայի կորուստ չի նշանակում առարկայի անհետացում / հավիտենապես ու անհետք միայն այն է կորչում, ինչի կորստյան հետ հաշտվում ենք մենք...բայց եթե զգում ենք,/ որ մեր կյանքը առանց նրա այլևս իմաստ չունի / նա էլ վերադառնում է, ավելի ճիշտ՝ վերածնվում է» (421): Այստեղ ուշագրավ է երկու հեղինակների գաղափարական հանգուցալուծումը՝ առաջինի պարագայում հերոսի ինքնասպանությունը խորհրդանշում է պետության-պետականության կործանում, երկրորդի պարագայում՝ հայրենիքի վերածննդի հեռանկար: Իսկ Այլիսլիի հերոսի՝ Սադայի մահը (սա մենք ևս գնահատում ենք որպես ինքնասպանություն, քանի որ նա պարզապես հրաժարվում է վերադառնալ իրականություն և մի քանի օրվա անգիտակից վիճակից հետո մահանում է) խորհրդանշում է պատմականորեն ստեղծված նոր իրականությունից հրաժարվելու և դրա հետ չհամակերպվելու հարցադրումը՝ ազգի որպես քաղաքակիրթ ազգ լինելու անկարելիությունը և դատապարտվածությունը, հատկապես երբ նկատի ենք ունենում, որ Սադայը մահանում է Բաքվում հայկական ջարդերից մեկ օր առաջ:

Երեք տեքստերում էլ զարմանալիորեն ընդհանրական դաշտ է ստեղծվում պատկերակերտման համակարգերում: Հատկապես ուշագրավ է նույնատիպ խորհրդանշանների կիրառումը: Վեպերում բոլոր երեք հերոսները մանկությունից ենթագիտակցորեն իրենց կյանքի ընթացքում մի պատկեր են տանում, ինչը պարբերաբար հայտնվում է նրանց հիշողությունների մեջ: Այդ պատկերը Անտոնի պարագայում աչքը թափած սկյուռն է, Սադայի պարագայում՝ գնդակահարված արյունոտված աղվեսիկը, Արշակի պարագայում՝ հարալեզ շունը: Վեպերում ակնհայտ են լեզվառճական ընդհանրությունները. այսպես, տեքստերում առկա է դեպքերի խճանկարային պատկերման սկզբունքը: Վեպերում դեպքերը, իրադարձությունները, մտքերը, զգացողությունները, ասոցիացիաները անդադար ընդհատում են մեկը մյուսին և արտասովոր կերպով միահյուսվում: Արդյունքում. եթե Այլիսլիի վեպը ամբողջովին կառուցվում է ներկա, անցյալ – հուշ-վերհուշ անցումների վրա, ապա Խեչոյանի և Ճիլաձեի տեքստերը ավելի լայն ընդհանրությունների դաշտ են ստեղծում, քանի որ երկուսի գրականությունն էլ հիմնված է միջակայի արձակի ավանդների վրա: Երկու հեղինակների տեքստերում էլ փաստերն ու իրադարձությունները միանշանակ չեն պատկերվում և մեկնաբանվում: Խեչոյանի վեպում վերոնշյալ հնարքը գրականագետ Ս. Գրիգորյանը իրավացիորեն վերագրում է վեպի պոլիֆոնիզմին: Այդ բազմաձայնության

սկզբունքը բնորոշ է ոչ միայն հերոսներին, այլև «կեցության ինքնաբավ հոլովույթին»¹⁶: Մտքի հոսքի տեխնիկայի կիրառմամբ միննույն փաստը Խեչոյանի արձակում տարածաժամանակային տարաբնույթ հաջորդականությամբ պատկերվում է հերոսների գնահատմամբ, դիտարկումներով և վերլուծություններով, ինչի շնորհիվ էլ առաջանում է անիմանալի ճշմարտության խաբկանքը: Ճիլաձեի պարագայում փաստերը ներկայացվում են ընկալողական խաբկանքի միջոցով, այն է՝ սպանում է ի վերջո Անտոնը հորը, թե՛ ոչ, կենակցել են արդյոք Լիզիկոն և սկեսրայրը, թե՛ միայն մի հպանցիկ համբույր է եղել: Ումի ց է հղիացել Լիզիկոն՝ հորի ց, թե՛ որդուց, Լիզիկոյի երեխան ծնվել է, թե՛ ոչ, բանտարկվել է Անտոնը, թե՛ ոչ. հարցեր, որոնք այդպես էլ վերջնական պատասխաններ չեն ստանում, ինչը, կարծում ենք, հեղինակի հղացքի հիմնական առանձնահատկություններից է բխում, քանի որ խնդիրն այն չէ, օրինակ, Անտոնը սպանել է հորը, թե՛ ոչ, այլ այն, որ համարձակվել է, քանի որ այս խնդիրներն արդեն ընտրության հարթության մեջ են դրվում: Անտոնը մահանում է, և կշարունակվի՞ երկրի կաշեկահացման ընթացքը, թե՛ կընդատվի, կշարունակի՞ երկիրը նայել ռուսի ձեռքին, թե՛ կմիանա Լյուդովիկոս Բոլոնիացուն՝ ժամանակակից Վրաստանի ընտրությունն է:

Այսպիսով, վերոնշյալ հեղինակների ստեղծագործությունների օրինակով կարող ենք եզրակացնել, որ անկախության շրջանում երեք ժողովուրդների գրականություններում գծագրվում է թեմատիկ-գաղափարական հղացումների ընդգծված ընդհանրություն՝ իհարկե, պայմանավորված ազգային առանձնահատկություններով, որոնք դրսևորվում են *հայ հեղինակի համար պետականության, վրացի հեղինակի համար հայրենիքի, ադրբեջանցի հեղինակի համար ազգային նկարագրի մասին մտորումներով և ապագայի մտահոգություններով*:

Ա. Մեմիթջյան-Քեքմեզյան

Հայրենիքը որպես պրոբլեմ գրական զուգահեռներում

Ամփոփում

Հոդվածում ուսումնասիրվում են անդրկովկասյան երեք հեղինակների՝ Լևոն Խեչոյանի, Օթար Ճիլաձեի և Աքրամ Այլիալիի՝ հետխորհրդային շրջանում գրված և նմանատիպ խնդիրներ արծարծող երեք վեպ: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ երեք

¹⁶ Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 177:

հեղինակները զարմանալի նմանություն ունեն տեքստի թեմատիկ և գաղափարական բաղադրիչների կառուցման մեջ: Ուշագրավ է, որ երեքի գեղարվեստական մտորումների ծիրում են ազգային պետության, հայրենիքի և ազգի մասին զուգահեռումները:

А. Семирджян-Бекмезян

Родина как проблема в литературных параллелях

Резюме

В статье рассматриваются постсоветские литературные тексты заковказских авторов- Левона Хечояна, Отара Чиладзе и Акрама Айлисли. Результаты исследования показывают, что у трех авторов имеются удивительное сходство в построении тематических и идеологических составляющих текста. И что самое интересное, среди трех авторов главная проблема вызывающая обеспокоенность - это проблема проявляющая в размышлениях о Государстве, Родине и Нации.

A. Semirjyan-Bekmezyan

The homeland as a problem in literaturrary parallels.

Summary

The article examines the post-Soviet literary texts of the Trans-Caucasian authors Levon Khechoyan, Otar Chiladze and Akram Aylisli. The results of the study show that the three authors have an amazing similarity in the construction of thematic and ideological components of the text. And most interestingly, among the three authors, the main problem of concern is the problem that manifests itself in reflections on the State, the Homeland and the Nation.

Խմբագրություն է ուղարկվել 01.07.19

Հանձնարարվել է գրախոսության 08.07..19

Տպագրության է հանձնարարվել 15.10.19